

դան ղեկավարութիւն չի ներկայացներ որ նշխարները Հայաստան կարենային փոխադրուել: որովհետեւ իր վերաբերման թեան համաձայն, Եւսեբիոս անուանով հարուստ վին մը ամփոփած է անոր նշխարները: Ուստի քանի որ Ս. Գրիգոր Կեսարիայէն ղարձին բերաւ այդ նշխարները՝ չէր կրնար 303էն առաջ հոն դադար ըլլալ ձեռնադրութեան համար: Անոնք որ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը 303էն առաջ կը դնեն, նկատի առած չեն այս պարագան: Միայն Հ. Ալիքեան է որ զայն նկատելով կը գրէ. «Եթէ որեւէ մասունք բերուած է, բերուած ըլլալու է Արիստակէսի ձեռքով»⁹⁶: Բայց ասիկա պատմական փաստը ըստ կամ փոխի կը նշանակէ: Պատմութեան վկայութեան մէջ՝ Աթանազիոսի նշխարները բերողը Ս. Գրիգոր նշանակուած է, եւ ոչ Արիստակէս: Ե. Քասունի կարծիքը, որ Գրիգորի ձեռնադրութեան թուականը 298ին կը դնէ, այս փաստին դիմաց ինքնին կը ջրուի: Իսկ Օրմանեան շատ զարմանալի կերպով Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան տարին կը դնէ « 302 տարւոյ առաջին ամիսներուն»: Ու միեւնոյն էջին մէջ խօսելով Աթանազիոսի վկային նահատակութեան վրայ՝ կ'ենթադրէ 303ին նահատակուած ըլլալը. եւ ապա կ'աւելցնէ. «Ս. Կարապետի մասունքէն զատ, Գրիգոր ստացաւ մաս մըն ալ իր ազգականին՝ Ս. Աթանազիոսի մասունքէն, եւ այնուհետեւ այս երկու անունները անբաժան փրկացած կը մնան ազգային յիշատակներու մէջ, եւ տարեկան տօնախմբութիւն ալ ունին»⁹⁷: Չամչեանի կարծիքը այս տեսակէտով աւելի բախտաւոր է. վասնզի 304ին զնելով անոր ձեռնադրութեան թուականը, Աթանազիոսի նահատակութեան տարի մը վերջ, Գրիգոր Լուսաւորչի կրնար Կեսարիայէն ղարձին՝ հետը բերել նոր նահատակուած սուրբին մասունքները: Սակայն Չամչեանի կարծիքն ալ ունի

ուրիշ անտեղութիւն, որուն համար հարկ է թողուլ զայն:

Դիոկղետիանոս կայսրը ճիշտ 303ին հալածանքի վճիռ հանեց եւ հալածանքները սկսան Նիկոմիդիայէն, ուր կայսրը կը քնակէր: Քիչ վերջ՝ հալածանքը տարածուեցաւ դէպի Արեւելք, Մելիտինէի կողմերը: Թէեւ Եւսեբիոսի համաձայն՝ Սեպտեմբերին, կայսեր թագադրութեան 20ամեայ տարեդարձին առիթով հալածանքը դադար ունեցաւ, բայց կարճ տեւեց: Վասնզի 304ին Գաղերիոս կայսրութեան տէր դարձաւ ու զարնան հրատարակեց խիստ վճիռ մը հալածանքի, որուն հետեւեցան ուրիշներ: 305ին Դիոկղետիանոս կայսրութենէ հրաժարեցաւ եւ Արեւելքը մնաց Գաղերիոսի ու Մաքսիմիանոսի ձեռքերուն մէջ. երկուքն ալ կատաղի հալածիչներ հանդիսացան քրիստոնէութեան դէմ: Եւ հալածանքները տեւեցին մինչեւ 311, երբ ընդհանուր ներում շնորհուեցաւ: Բայց Մաքսիմիանոս Դաժա կը շարունակէր հալածանքները իրեն ենթակայ երկիրներուն մէջ՝ Պաղեստին, Սիրիա ու Փոքր Ասիա⁹⁸: Ուստի, այս ժամանակամիջոցին, որ է 304-312, կարելի չէ տեղաւորել Ս. Գրիգորի ձամբորդութիւնը դէպի Կեսարիա՝ այն հանդիսաւորութեամբ, որ նկարագրուած է անոր յունարէն վարքին մէջ:

2. — Ս. Գրիգորի յունարէն նորագիւտ վարքին մէջ, ձեռնադրութեան պարագաներու շարքին կայ նշանակալից կէտ մը, որ կրնայ ձեռնադրութեան թուականի հարցը վճռականորէն լուծել. այսինքն հոն յիշուած քսան եպիսկոպոսներու ժողովքը, դուժարուած Ս. Գրիգորի ձեռնադրութեան համար: Այս պարագան Ազատագրութեան հայերէն բնագրին մէջ տարտամ ձեւով մը յիշուած է « Ժողովեալ բազում եպիսկոպոսաց » բացատրութեամբ. մինչ յունարէնը ճշտած է թէ

թիւով քսան էին հաւաքուած եպիսկոպոսները:

Չարմանալի պէտք չէ երեւի այս քան հանդիսաւորութիւն՝ եպիսկոպոսական ձեռնադրութեան մը համար, եթէ նկատենք կատարուած դէպքին վարեւորութիւնը: Ամբողջ թագաւորութիւն մըն էր որ մէկ օրէն միւսը քրիստոնեայ կը դառնար, թագաւորով, իշխաններով ու ժողովուրդով, եւ ասիկա արդիւնք՝ Կեսարիայէն զրկուած առաքելալի մը, որ ահա իր մայրենի քաղաքը կը վերադառնայ 16 իշխաններու եւ 30-000 ձիաւոր շքախումբի հետ, բազմաւ արքայական կողմի մէջ: Այսպիսի հանդիսաւորութեան կը վայելէր նոյնքան հանդիսաւոր եկեղեցական արարողութիւն:

Սակայն քսան եպիսկոպոսները հոն չգումարուեցան լոկ ձեռնադրութեան արարողութիւնը կատարելու համար: Այս թիւը քիչ մը շատ է պարզ արարողութեան մը համար: Անոնք ներկայութիւնը մեղի զգացնել կու տայ թէ հոն տեղի ունեցաւ եկեղեցական ժողովք: Այս իսկ պատճառով յունարէն վարքին մէջ կը յիշուի Սիւնհոգոսական թուղթ մը, զոր Ս. Գրիգոր պէտք էր տանիլ Սերաստիոյ Պետրոս եպիսկոպոսին:

Բնական է այժմ հարց դնել թէ իսկապէս եղած է կամ յիշուած է պատմութեան մէջ Կեսարիոյ ժողովք մը. ու ե՞րբ տեղի ունեցած է ան: Ահա այս հարցին պատասխանէն կարելի պիտի ըլլայ ճշտել Ս. Գրիգորի ձեռնադրութեան ստույգ թուականը:

Մինչեւ 1938 այս մասին տարտամ ու տարակուսական ծանոթութիւններ միայն կային, երբ այդ թուականին՝ Պելճիքացի պատմագէտ Լըպոն⁹⁹ յօդուածով մը ցոյց տուաւ թէ Կեսարիոյ մէջ եկեղեցական ժողովք մը դուժարուած է իսկապէս, ընդ մէջ Անկիւրիոյ եւ Նեոկեսարիոյ ժողովքներուն: Այս վերջիններու կանոնները ծանօթ էին, մինչ Կեսարիոյ ժողովքին

կանոնները կային միայն հայերէն եւ ասորերէն թարգմանութեանց մէջ, ու կեղծ կը համարուէին: Լըպոն դառաւ ուրիշ պատմական փաստ, ցուցնելու թէ՛ ըլլա՛յ Կեսարիոյ ժողովքը, ըլլա՛յ անոր կանոնները պատմական են: Այդ փաստն ալ հայ կանոնագրերու մէջ պահուած էր: Նիկիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներու անուանացանկին մէջ, հայկական թարգմանութեան մէջ միայն, կար հետեւեալ վերտառութեամբ անուններու շարք մը. «Եւ որք ի Կեսարիա ժողովեցան. Եւստաղիոս, Սակոս... Դեոնդիոս»¹⁰⁰. քսան եպիսկոպոսներու անուանացանկ մը՝ առանց աթոռանիստ քաղաքներու յիշատակութեան: Լըպոն կը հետեւցնէր թէ այդ անուանացանկը Կեսարիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներու անուններն էին, հանուած իրենց տեղէն ու գետեղուած Նիկիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներու անուանացանկին վրայ, այն նպատակով որ անոնք թիւը հասնէր 318ի. որովհետեւ Նիկիոյ ժողովքին Հայերու պաշտօնական թիւը 318 էր, թէեւ այդ յաւելումով հանդերձ՝ հեղինակը հասած չէր իր նպատակին: Բարեբախտաբար յաւելումը կատարողը անունները փոխադրած էր վերտառութեամբ միասին, ուր կը կարգացուի դեռ ժողովքի վայրը:

Լըպոն իր ուսումնասիրութիւնը կատարած էր Ս. Գրիգորի նորագիւտ վարքին հրատարակութենէն տասնեակէկ տարի առաջ. եւ Պելճիքացի պատմագէտը հասած էր այն եզրակացութեան՝ թէ Կեսարիոյ մէջ իսկապէս տեղի ունեցած էր եկեղեցական ժողովք, ընդմէջ Անկիւրիոյ (314) եւ Նեոկեսարիոյ (319) ժողովքներուն. որովհետեւ հայերէն կանոնագրերը կը պահեն այդ ժողովքի կանոնները ու զանոնք կը դասուորեն յիշեալ երկու քաղաքներու կանոններու միջեւ: Եւ աւելի մանրամասնելով իր եզրակացութիւնը, կ'ըսէր թէ 314ի Կեսարիոյ ժողովքը տեղի ունեցած էր ամառը¹⁰⁰:

96. Ալիքեան, Գրիգոր Լուս., էջ 55, ճ.հ. 19:

97. Օրմանեան, Ազգապատմութիւն, Ա. էջ 94:

98. Fliche et Martin, Histoire de l'Eglise, II, p. 463-470.

99. Lebon, Sur un concile de Césarée, Muséon, 51, (1938) p. 89-132.

100. Lebon, Ibid. p. 128.



839-62
1609-21

Պրոֆ. Կարիթ, որ հրատարակած է Ս. Գրիգորի նորագրված վարքը, ծանոթութեանց բաժնին մէջ դիտել տուած է՝ որ վարքին մէջ յիշուած Կեսարիոյ ժողովքի եղելութիւնը կը հաստատէ Լըպոնի առաջարկութիւնը: Վասնզի երկու տեղն ալ ժողովքի պարագաները նոյն են: Քսան և պիսկոպոսներ կը ճշտէ Ս. Գրիգորի վարքը: Քսան են Կեսարիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներու անունները: Նոյն վարքին համաձայն՝ Սերաստիոյ Պետրոս եպիսկոպոսը կը մնայ իր քաղաքին մէջ, եւ չի մասնակցիր Կեսարիոյ ժողովքին: Նոյնպէս Լըպոնի վեր հանած Կեսարիոյ ժողովքի մասնակցող եպիսկոպոսներու անունները անուանացանկին մէջ բացակայ է Պետրոսի անունը: Նմանապէս ժամանակի տեսակէտով՝ Լըպոն Կեսարիոյ ժողովքը կը դնէ Անկիւրիոյ ժողովքէն անմիջապէս վերջ, 314ի ամառը: Գրիգորի վարքը նոյնը կ'ենթադրէ, վասնզի Ս. Գրիգոր Կեսարիա կ'երթայ Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելէն վերջ, որ է 313ի Միլանի վճիռէն յետոյ¹⁰¹:

Հետեւաբար, իրարմէ բոլորովին անկախ երկու պատմական փաստեր կու գան ապացուցանելու թէ Կեսարիոյ մէջ 314ին տեղի ունեցած է եկեղեցական ժողովք: Այդ ժողովքին կանոնները եւ անոր մասնակցող եպիսկոպոսներու անունները պահուած են հայ կանոնադրքերու մէջ. իսկ հոն տեղի ունեցած՝ Ս. Գրիգորի ձեռնադրութեան պատմութիւնն ալ պահուած է յունարէն նորագրիւտ վարքին մէջ, որ նախնական հայերէն Ազաթանդեղոսի թարգմանութիւնն է. ուստի բոլորն ալ հայկական աղբիւրներու մէջ մնացած:

3. — Այժմ անցնինք աւելի մօտէն ծանօթանալու Կեսարիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներուն: Ըսինք՝ թէ Լըպոնի վեր հանած Կեսարիոյ ժողովքին

եպիսկոպոսներու անունանցանկը չի տար անոնց աթոռանիստ քաղաքներու անունները: Անշուշտ հետաքրքրական պիտի ըլլար դիտնալ ատիկա եւ ըստ այնմ կշռել ժողովքին վարեւորութիւնը: Լըպոն անոնցմէ հինգ հատը ստուգած է՝ համեմատելով Անկիւրիոյ ժողովքին եպիսկոպոսներու անունանցանկին հետ, ու դրած է ա) Վիտաղիոս Անտիոքի եպիսկոպոս.

բ) Ղուպոս Տարսոնի եպս.

գ) Նարկիսոս Ներոնիատի եպս.

դ) Բասիլիոս Ամասիոյ եպս.

ե) Հերակլէս Զիլացոց եպս.:

Այս անուններէն հետեւցուցած է որ անոնք Անկիւրիոյ ժողովքէն վերադարձին՝ անցնելով Կեսարիայէն, որ դիւստր ճամբան էր դէպի հարաւ եւ արեւելք, հոն հաւաքուած են քանի մը կանոններ հաստատելու. ուստի ժողովքին թուականն ալ համարած է որ ըլլայ նոյն տարուան (314) ամառը¹⁰²: Այս ենթադրութիւնը բաւական համոզիչ կը թուի. մանաւանդ երբ միւս եպիսկոպոսներու անուններն ալ ստուգենք. վասնզի պիտի տեսնենք որ Անկիւրիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներէն 11 հատը հոն եկած են, եւ ճիշտ այն եպիսկոպոսները՝ որոնք արեւելեան եւ հարաւային դաւաններու կը պատկանին. իսկ միւսները նոր հաւաքուած են այդ ժողովքին համար: Ուստի հաւանական է որ նոյն տարուայ անուն եղած ըլլայ այդ հաւաքոյթը: Հեֆելէ¹⁰³ Անկիւրիոյ ժողովքին թուականը ճշտելու համար նկատել տրուած է որ նոյն ժողովքին վեցերորդ կանոնին մէջ կ'ըսուի թէ ժողովքը եղած է առաքելական կանոններու համաձայն: Արդ, առաքելական կանոններու մէջ կանոն մըն ալ կայ որ կը պատուիրէ եպիսկոպոսներուն՝ ամէն տարի Զատիկի Դ. կիրակին եւ անոն՝ ժողովքը գումարել¹⁰⁴. ասկից Հեֆելէ կը հետեւցնէ որ Անկիւրիոյ ժողովքը գումարուած ըլլայ հալածանքներու

104. Կանոնագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Ա. Կանոնք Առաքելականք. (հրատ. Կէտիկեան Հ. Հ.) Վենետիկ, 1941, էջ 57, կանոն ԼԵ.:

րու դադարումէն անմիջապէս վերջ, 314ի Զատիկի չորրորդ կիրակին: Մենք ալ նոյն կանոնին վրայ հիմնուած՝ կրնանք ըսել որ Կեսարիոյ ժողովքն ալ գումարուած ըլլայ նոյն տարուան (314ի) անուն: Ահա Կեսարիոյ ժողովքին մասնակցող եպիսկոպոսներու անունանցանկը, որոնց ըզմ նշանակեցինք աթոռանիստ քաղաքներու անուններն ալ, քաղելով Անկիւրիոյ¹⁰⁵ կամ Նիկիոյ ժողովքներուն մասնակցող եպիսկոպոսական ցանկերէն¹⁰⁶:

Եւ որք ի Կեսարիա ժողովեցան¹⁰⁷.

1. Եւտաղիոս (յԱնտիոքէ) . 313-319:
2. Սակտոս (ղուցէ Մարկեդոս յԱնկիւրիոյ):
3. Ղուպոս (ի Տարսոնէ) - Կիլիկիա:
4. Վաղենտինոս —
5. Ղեւոնդիոս (ի Կեսարէ) - Կապադովկիա:
6. Նարկիսոս (ի Ներոնիադէ) - Կիլիկիա:
7. Պասիղես (յԱմասէ) - Դիոսպոնտոս:
8. Գրիգորիոս (ի Բիւրիտոնէ) - Փիւնիկէ:
9. Դակասիոս (ի Տաւոսէ) - Գաղատիա:
10. Աղվերոս (իմա Աղվիոս յԱպամէ) - Կելեսիւրիա:
11. Գոդիանոս (իմա Գորդոնիոս ի Կիւնոնէ) - Գաղատիա:
12. Գերմանոս (ի Նէպոլիտոյ) - Պաղեստին:
13. Հերակլէոս (ի Զեդոնէ) - Դիոսպոնտոս:
14. Գերանտիոս (ի Լարոսէ) - Կելեսիւրիա:
15. Ամփիոպի (յԵպիփանէ) - Կիլիկիա:
16. Ստեփանոս (ի Բարոտանէ) - Իսաւրիա:

105. Hefélé, անդ, էջ 300-301:

106. H. Gelzer, *Patrum nicaenorum nomina*, Lipsiae, p. LX-LXIV.

107. Կեսարիոյ ժողովքին եպիսկոպոսներու անունները կան գանազան կանոնադրքերու մէջ՝ յետ Նիկիոյ ժողովքին եպիսկոպոսներու անուններուն. առանձին ալ օրինակուած են Ոսկեփո-

17. Սաէտոս (յԵդեսիոյ) - Միջագետք (313-324):

18. Սաղամինէոս (ի Գերմանիկէ) - Կելեսիւրիա:

19. Երիթրիոս (ի Կողովնայ) - Կապադովկիա:

20. Ղեւոնտինոս (ղուցէ Ղոնկինոս ի Նէոկեսարիայ) - Պոլիմոնական Պոնտոս:

Թիւ 1, 2, 3, 5, 6, 7, 12, 13, 15, 18, 20 համարով նշանակուած եպիսկոպոսները մասնակցած են Անկիւրիոյ ժողովքին, եւ անոր անունանցանկէն քաղուած են աթոռանիստ քաղաքներու անունները: Մնացածները՝ վերոյիշեալներուն հետ՝ մասնակցած են նաեւ Նիկիոյ ժողովքին, եւ անոր անունանցանկէն քաղուած են աթոռանիստ քաղաքներու անունները: Բացառութիւն կը կազմեն Վիտաղիոս Անտիոքի եպիսկոպոսը, որ միայն Անկիւրիոյ ժողովքին ներկայ եղած է, եւ Սաէտոս որ յիշեալ երկու ժողովքներուն չէ մասնակցած, բայց Կեսարիոյ ժողովքին եկած է, որովհետեւ Հայաստանի դարձը եւ անոր Հայրապետին ձեռնադրութիւնը անշուշտ զինքն ալ կը հետաքրքրէր:

Այս ցուցակէն կը տեսնուի որ Կեսարիա հաւաքուած եպիսկոպոսները կը պատկանէին դիւստրաբար այն դաւաններուն, որոնք Կապադովկիան կը շրջապատեն. այսպէս Գաղատիա, Դիոսպոնտոս ու Պոլիմոնական Պոնտոս, Կիլիկիա, Իսաւրիա, Սիւրիա եւ Միջագետք: Կայ նաեւ հեռաւոր Պաղեստինէն ալ եպիսկոպոս մը, որուն ներկայութիւնը կը բացատրուի անով որ Անկիւրիոյ ժողովքին ալ մասնակցած է: Երկու եպիսկոպոսներու միայն աթոռանիստ քաղաքները չկրցանք որոշել, մին՝ Վաղենտինոս, միւսը՝ Գրիգորիոս. այս վերջինիս անունը Նիկիոյ ժողովքին

ընկնելու մէջ. համա. Հ. Բ. Սարգիսեան, Ցուցակ Ձեռ. Բ, էջ 949: Աթոռանիստ քաղաքներու անունները՝ քաղելով Նիկիոյ ժողովքի Հայրերու անունանցանկէն, հետեւեցանք հայերէն թարգմանութեան տառադարձութեան. համա. H. Gelzer, *Patr. nic.* էջ 186-212:

101. Garitte, *Documents*, p. 131.

102. Lebon, *Ibid.* p. 128.

103. Hefélé, *Histoire des Conciles*, Paris, 1907, I, p. 298-326.

մէջ կը յիշուի իրբեւ Բիւրիտոնի կամ Պէյ-
րութի եպիսկոպոս, Փիւնիկէէն. սակայն
չենք գիտեր ինչպէս բացատրել այնքան
հեռուոր քաղաքի եպիսկոպոսին ներկա-
յութիւնը Կեսարիոյ մէջ, եթէ անոր հետ
նոյնացնենք Գրիգորիոսը:

Ստորագրութեանց կարգն ալ կը ցուցնէ
անոնց աթոռներու պատուի վարդը: Առա-
ջին տեղը անտարակոյս կը պատշաճի Ան-
տիոքի աթոռին. երկրորդը, եթէ մեր
կուսումը ուղիղ է, Անկիւրիոյ աթոռինն
է, որուն Մարկեղոս եպիսկոպոսը Անկիւ-
րիոյ ժողովքին մէջ ալ Անտիոքի եւ Պա-
ղեստինեան Կեսարիոյ եպիսկոպոսէն վերջ
ստորագրած է: Երրորդը Կիլիկիոյ զիւս-
ւոր քաղաքին՝ Տարսոնի եպիսկոպոսինն
է. չորրորդը ծանօթ է, բայց պէտք է Կե-
սարիոյ եպիսկոպոսէն ալ նախապատիւ
մէկու մը պատկանի. վասնզի Կեսարիոյ
Ղեւոնդիոս հայրապետը հինգերորդ տեղը
ստորագրած է, ինչպէս կը պատշաճէր ի-
րեն, քանի որ համեմատութեամբ նա-
խորդներուն՝ աւելի նոր աթոռ էր:

Եպիսկոպոսական այս մեծ ժողովքին
հանդիսաւորութիւնը ցոյց կու տայ Հա-
յաստանի դարձին եւ անոր եպիսկոպոսին
ձեռնադրութեան կարեւորութիւնը: Հոս
յայտնի կը տեսնուի թէ եկեղեցական մեծ
եղելութեան մը զիմացն ենք, որով ոչ մի-
այն Կեսարիոյ աթոռը կը հետաքրքրուէր,
այլ նաեւ Արեւելի բոլոր եպիսկոպոսնե-
րը: Այս մասին անշուշտ Ս. Գրիգոր շատ
լաւ տեղեակ էր, որ ուղեց Կեսարիա եր-
թալ ձեռնադրութիւն ստանալու համար.
Եւ վարելի չէ զայն նկատել «պատահական
մի պարագայ, որ առաջ եկած է կա՛մ
Գրիգորի Կեսարիոյ մէջ ունեցած անձնա-
կան յիշատակներէն եւ յարաբերութիւն-
ներէն եւ կամ Տրդատի՝ զործին չքեղու-
թիւն տալու փափաքէն»¹⁰⁸: Ինչպէս պա-
տահական չէր վրաց եւ Աղուանից կաթո-
ղիկոսներուն Հայաստան վալն ու մեր կա-

108. Օրմանեան, Ազգապատում, Ա, էջ 93:
109. Ակինեան, Կիւրիոն Կաթողիկոս վրաց, Վիեն-
նա, 1910, էջ 9-20, 83-101:

թողիկոսներէն ձեռնադրութիւն ստանա-
լը¹⁰⁹: Եկեղեցիներու այս յարաբերու-
թիւններուն բուն պատճառը ո՛չ թէ անձ-
նական յիշատակներու՝ այլ աւելի հնա-
ւանդ սովորութեան կամ օրէնքի մը մէջ
փնտռելու է: Գրիգոր Լուսաւորչի ձեռնա-
դրութեան առիթով Կեսարիոյ մէջ գու-
մարուած այսպիսի ընդհանուր ժողովք
մը, ուր հաւաքուած էին Արեւելքի եպիս-
կոպոսներու մեծ մասը, ցոյց կու տայ թէ
անոնք հոն եկած չէին պարզ ձեռնադրու-
թեան արարողութիւն մը կատարելու, այլ
նաեւ իրաւական սահմաններ որոշելու:
Այսպիսի որոշում մը հարկ է ենթադրել՝
բացատրելու համար թէ ինչու ամբողջ Դ.
դարուն մեր կաթողիկոսները Կեսարիա կը
ճամբորդեն ձեռնադրութիւն ստանալու
համար: Առաքելական կանոններու մէջ
օրէնք մը կայ, որ խստիւ կ'արգիլէ եպիս-
կոպոսներուն «Արտաքոյ իւրեանց սահմա-
նաց ձեռնադրութիւն առնել, որք ոչ ընդ
նորա ձեռամբ են քաղաքք կամ գա-
ւառքք»¹¹⁰: Այս կանոնին զօրութեամբ՝ Կե-
սարիոյ եպիսկոպոսը պէտք էր համար-
ձակիլ երբեք ձեռնադրել Հայաստանի կա-
թողիկոսը կամ եպիսկոպոս մը. մինչդեռ
Փաւստոսէն զիտենք՝ թէ Կեսարիոյ եպիս-
կոպոսները ձեռնադրած են մեր կաթողի-
կոսներէն Յուսիկ, Շահակ, Փառէն ու
Ներսէս: Եւ երբ Պապ Թադաւորը ուղելով
այդ կապը խղել՝ առանց Կեսարիոյ հաւա-
նութեան ընտրեց կաթողիկոս մը, Կեսա-
րիոյ եպիսկոպոսը զրկեց Հայոց կաթողի-
կոսը՝ ձեռնադրութիւններ կատարելու ի-
րաւունքէն՝ Կեսարիոյ մէջ գաւառական
ժողովք մը գումարելով. եւ հայ եպիսկո-
պոսական թեկնածուներ ստիպուեցան Կե-
սարիա ճամբորդել ձեռնադրութիւն ստա-
նալու համար¹¹¹: Ասիկա ցոյց կու տայ թէ
իրաւական ինչ կապերով միացած էր Հա-
յաստան կամ հայ եկեղեցին Կեսարիոյ ա-
թոռին հետ: Եւ այս կապը ստեղծուեցաւ

110. Կանոնք Առաքելական, Կանոն ԼԳ (էջ 57):
111. Փ. Բիւզանդ, Պատմութիւն, Վենետիկ, 1933,
էջ 230:

կամ լաւ եւս վաւերացուեցաւ Կեսարիոյ
ժողովքին մէջ, ինչպէս յետոյ նման ժո-
ղովքի մը մէջ պատիժի ենթարկուեցան
հայ կաթողիկոսները: Կեսարիոյ իրա-
ւունքն ալ հիմնուած է իր առաքելին,
Ս. Գրիգորի ջանքերով ու վաստակով
Հայաստանը ամբողջութեամբ դարձի բե-
րած ըլլալու արդիւնքին վրայ. ճիշտ ինչ-
պէս Վրաստանի եւ Աղուանից կապը Հայ
եկեղեցւոյ հետ հիմնուած է Ս. Գրիգորի
եկեղեցւոյ հետ հիմնուած է Ս. Գրիգորի
եւ անոր յաջորդներու ձեռքով քրիստո-
նէսութեան հոն ծաւալելուն եւ եկեղեցա-
նէսութեան հոն ծաւալելուն վրայ:
Կան կաղմակերպութիւն ստանալուն վրայ:
Ս. Գրիգոր ձեռնադրութիւն ստանալէ
վերջ, եկեղեցական հնաւանդ սովորու-
թեան համաձայն, որ մինչեւ այսօր ալ
թեան համաձայն իրաւական կանոններուն
դեռ Արեւմուտքի իրաւական կանոններուն
մէջ կը մնայ, պէտք էր պաշտօնապէս իր
աթոռը ստանձնէր. եւ այս կանոնական
արարողութիւնն ալ կատարուեցաւ Սե-
րաստիոյ Պետրոս եպիսկոպոսին ձեռքով,
որուն պաշտօն յանձնուեցաւ Կեսարիոյ
ժողովքին կողմէ, նոյն քաղաքի եպիսկո-
պոսէն, որ տանի Ս. Գրիգորը մինչեւ
Հայաստան ու հոն, Աշտիշատի մէջ,
բաղմեցնէ «առաքելական աթոռի» վրայ:
Այս կանոնական արարողութիւնն ալ ա-
ռաքելական կանոններու մէջ ենթադր-
ուած է. այսպէս ԼԳ. կանոնը կը գրէ.
«Եթէ ոք ձեռնադրեալ եպիսկոպոս ոչ ըն-
կալաւ զպաշտօն եւ զհոգս ժողովրդեանն
ընձեռնելոյ նմա. սա որոշեալ լիցի մինչեւ
ընկալցի»: Ու միեւնոյն արարողութիւնը
կարելի է նշմարել Յուսիկի ձեռնադրու-
թեան առիթով ալ, երբ Փաւստոսի բա-
ցատրութիւնը համեմատենք Ս. Գրիգորի
պատմածին հետ, ինչ-
պէս տեսանք վերը (Տե՛ս թիւ 33 ծան.):

4. — Բայց մեղի համար հոս կարեւորը
ժամանակագրական տեսակէտն է, որ Պե-
տրոս եպիսկոպոսի անձովն ալ պէտք է
ցուցնենք: Սերաստիոյ աթոռին վրայ Պե-
տրոս անունով եպիսկոպոս մը ծանօթ է

112. Garitte, Documents, p. 229.

381ի տոնները, եւ եղբայրն է Ս. Բար-
սեղի. այս պարագան կրնար մեծ դժուա-
րութիւն յարուցանել վերեւ պատմուած-
ներուն ճշմարտութեան վրայ: Բարեբախ-
տաբար Ս. Գրիգորի այս վարքէն առաջ
արդէն գտնուած են վկայութիւններ, ուր
Ս. Բարսեղի եղբայրը կը կոչուի երկրորդ
Պետրոս, ինչ որ կը փաստէ առաջին Պե-
տրոսի մը գոյութիւնը¹¹²:

Մենք գտանք աւելի դրական փաստ մըն
ալ՝ Պետրոս Առաջինի գոյութեան մասին,
որ լրիւ կ'ապացուցանէ յունարէն վարքին
յիշած Պետրոս եպիսկոպոսի թէ՛ գոյու-
թիւնը եւ թէ ժամանակը: Ս. Աթանազի-
նէսի հայերէն վկայաբանութեան մէջ կը
յիշուի «Պետրոս Սերաստիոյ եպիսկոպոս
բարեկամ Աթանազիւնէսի»¹¹³: Աթանազի-
նէս նահատակուած ըլլալով 303ին, անոր
բարեկամ Սերաստիոյ եպիսկոպոսը, կըր-
նար ժամանակակից ըլլալ Ս. Գրիգորի
ձեռնադրութեան: Թէեւ Նիկիոյ ժողովքին
մէջ (325) Սերաստիոյ եպիսկոպոսը Եւդա-
ղիոս է, անշուշտ Պետրոսի յաջորդը, սա-
կայն յունարէն վարքին մէջ Սերաստիոյ
քառասուն մանկանց նշխարներու ամփո-
փումը վերաբրուած է Պետրոսի: Այդ
դէպքը պատահած է 320ին. ուստի Պետրո-
սի Սերաստիոյ եպիսկոպոսական աթոռի
վրայ գտնուիլը փաստուած է 303-320 տա-
րիներուն. եւ հետեւաբար 314ին իրեն
յանձնուած պաշտօնը կրնար կատարել, Ս.
Գրիգորը պաշտօնապէս Հայաստանի ա-
թոռին վրայ բաղմեցնելու:

5. — Եղբայրացներով՝ կրնանք ըսել թէ
Ս. Գրիգորի նորայայտ յունարէն վարքը,
կը ճշտէ Ս. Գրիգորի ձեռնադրութեան
տարին 314ի աշնան:

Այս թուականը կը փաստուի նաեւ մեր
մատենագիրներուն տուած ժամանակա-
դրական տեղեկութիւններով որոնք այսօր
ուրիշ զօրութիւն ունին Մանանդեանի
պատմական նոր և ընդարձակ ուսումնա-
սիրութեան լոյսին տակ, ինչպէս տեսանք:

113. Վարդ եւ Վկայաբանութիւն, էջ 64:

Այս պատմական աղբիւրներէն զլիսաւորը դարձեալ Մ. Խորենացիի վաւերական մէկ վկայութիւնն է. այսինքն թէ «Յեւթն եւ ի տասններորդն ամի թագաւորութեանն Տըր-դատայ դտաք նստեալ յաթու սրբոյ Առաքելոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս»¹¹⁴։ Վաւերական վոչեցիք այս վրկայութիւնը, որովհետեւ պատմական այս մեծ եղելութիւնը, այն է Մ. Գրիգորի ձեռնադրութիւնը, պէտք է նշանակուած ըլլար հնագոյն վաւերագիրներու մէջ. եւ Խորենացիին ըսելու ձեւը ցոյց կու տայ թէ աղբիւրի վաւերագիր մը գտած էր ան։ Վաւերագիրն գոյութեան ապացոյց կրնայ ըլլալ հոն գործածուած թուականի ձեւն ալ, որ ժամանակի թուականի գործածութեան պաշտօնական ձեւն է. այսինքն՝ Հայոց թագաւորի տարեթիւի յիշատակութիւնը։ Ճիշտ ինչպէս Կորնիւի մօտ Գրոց գիւտը նշանակուած է. «Ի վեցերորդ ամի Վոսմալահոյ»։ Այս ձեւով թուականի գործածութիւնը հասարակաց էր Հայոց եւ Պարսից մօտ։ Եւ երբ հայկական թագաւորութիւնը վերցունցաւ, մեր պատմական հնագոյն յիշատակները նշանակուեցան Պարսից թագաւորի տարեթիւով, ինչպէս կարելի է տեսնել Եղիշէի, Ղ. Փարպեցիի, Գիրք թղթոցի պաշտօնական յիշատակութիւններուն մէջ։ Ուստի Մ. Խորենացիի ըով Գրիգորի ձեռնադրութեան թուակա-նին համար յիշուած «Յեւթն եւ ի տաս-ներորդի ամի Տըդատայ» հնագոյն վաւերագիր մը ենթադրել կու տայ։

Հոս կը մնար ճշտել Տրդատի թագա-
ւորութեան առաջին տարուան թուականը :
Մ. Խորենացին իր անձնական քննու-
թեամբ դտած էր որ Դիոկղետիանոսի եր-
րորդ տարին եղած ըլլայ, ինչպէս ինք
կ'ըսէ . « Մանասիոսէիւ քննեալ գտաք
զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի
Դիոկղետիանոսի»¹¹⁵ : Բայց Խորենացին իր
քննութեան մէջ կ'ընար սխալիլ, ինչպէս
Մանանդեանի պատմական նոր ուսումնա-
սիրութիւնը ցոյց կու տայ : Ուստի ըն-
տրելագոյն է զիմել ուրիշ աւելի ապահով
աղբիւրի . Աւ ահա Սեբէոսի վերագրուած
պատմութեան եռանուն ցանկին մէջ պահ-
ուած կը մնայ Տրդատի թագաւորութեան
սկզբնաւորութեան ստոյգ տարին , որ է
« Ի հնգետասաներորդի ամի Դիոկղետիա-
նոսի» : Այս թուականը (298) պատմական
նոր ուսումնասիրութիւններով ալ հաս-
տատուած՝ պէտք է ըսել թէ վաւերական
թուականն է Տրդատի թագաւորութեան
սկզբնաւորութեան : Եւ ձերկու աղբիւրներու
տուեալները միացնելով՝ կ'ունենանք Ս.
Գրիգորի ձեռնագրութեան բուն թուակա-
նը . այսինքն 314 տարին : Այս նոյն թուա-
կանը , ինչպէս տեսանք , Կեսարիոյ Ժողով-
քին թուականին հետ կը նոյնանայ , ուր
տեղի ունեցած է Ս . Գրիգորի ձեռնագրու-
թիւնը , անոր նորայայտ յունարէն վար-
քին համաձայն : Եւ իրարմէ անկախ ու-
սումնասիրութիւններու հանդիպումը , կը
համարիմ թէ մեզ կ'առաջնորդէ պատմա-
կան ստուգութեան :

(Շարունակելի)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

114. Մ. Խորենացի, Պատմութիւն, Բ. Ղա. 52 379:

115. Մ. Խորենացի, Պատմութիւն, Բ. 2ր. էջ 345:

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱԻԱՏՔԸ

ՊԱՏԱՐԱԳ ՎԱՍՆ ՆՆԶԵՑԵԼՈՑ

(Смр. иб'и Рукис. 1959, [р. 11-12, էջ 259)

11.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՑԻ

ԺԳ. դարու մեր եկեղեցական հեղինակ-
ներուն մէջ անուանի է Յովհաննէս Արճի-
շեցի, Տուրուբերանի Քաջբերունեաց դա-
ւառէն, աշակերտ Ներսէս Գլաճորեցիի եւ
դասընկեր՝ համբաւաւոր Եսայի Նէշեցիի։
Յովհաննէս Արճիշեցի Թողած է «Մեկնու-
թիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ Պատարա-
գիւն», որ ունեցած է երեք տպագրու-
թիւն. առաջին երկուքը Պոլիս (1717ին եւ
1799ին), վերջինը Կալկաթա, 1830ին։
Գրքին խորագրին մէջ իսկ յայտարար-
ուած է «արտահանեալ ի մեկնութեանց
հոսրովու Անձեւացեաց Եպիսկոպոսի, եւ
Ներսեսի Լամբրոնացոյ՝ վերատեսչին
Տարսուսի, կարնելով եւ պարգաբանելով»։
Իրապէս Արճիշեցի հետեւող մըն է իր եր-
կու լուսամիտ նախորդներուն, եւ անոնց
նման՝ մեզի չափ կարեւոր դասեր կու տայ
ննջեցեալներու ի նպաստ պատարագ մա-
տուցանելու հարցին նկատմամբ. ընդհան-
րապէս կը կրկնէ եւ կը վերահաստատէ
Լամբրոնեան աւանդութիւնը. բայց միա-
ժամանակ ունի իւրայատուկ բացատրու-
թիւններ, որոնք աւելի եւս կը պարզա-
բանեն մեր հարցը։

1. - Արճիշեցի, ամէնէն առաջ, քննելով «Բէ գիա՞րդ յամենայն աւուր հրաման ընկալա՞մ պատարագել գրիքիստոս», կը թուէ ներուն դարձ եւ փրկութիւն կը պարգեւէ պատարագի սուրբ Զոհը, ննջեցեալներուն՝ յաւիտեանական կեանքի:

Արճիշտացիի համաձայն, ամէն օր պէտք

է սուրբ պատարալ մատուցանել, որով-
հետեւ ամէն օր ննջեցեալ ունինք:

2. — Իսկ թէ սուրբ Պատարագը ննջեցեալներու փրկութեան համար մեծ նըպաստ է, այդ կը փաստէ Ս. Գրքի վկայութեամբ. Քրիստոսի մահով — կը յարէ Արժիշեցի — հին ուխտի ննջեցեալները փրկուեցան. ուրեմն հիմա մեր ննջեցեալներն ալ կը փրկուին սուրբ Պատարագով՝ որ Քրիստոսի Զոհին յիշատակն է, անոր անարիւն կրկնութիւնը, շարունակութիւնը: Արժիշեցի այսպէս կը խօսի.

«Եւ ոչ կենդանեացն միայն՝ որք հաւատով հաղորդին՝ լինի սա փրկութիւն, այլ եւ մեռելոց, որք այնու հաւատով եւ յուսով ի Քրիստոս ննջեցին: Քանզի մահն Քրիստոսի ոչ միայն կենդանեաց եղել փրկութիւն, այլ եւ մեռելոց, որպէս ասէ Պետրոս. եւ ոգւոցն որք էին ի դժոխս՝ երբեալ անտարանեաց (Ա. Պետր. Գ. 19): Եւ որպէս յայնժամ չարչարանք եւ մահն Քրիստոսի՝ կենդանեաց եւ մեռելոց արար փրկութիւն, նոյնպէս եւ այժմ յիշատակ մահու նորին եւ կատարումն՝ անկէ փրկութիւն եւ մեռելոց»²:

3. - Ապա կ'անցնի թուելու ննջեցեալ-
ներու տեսակները, բացատրելու համար
թէ որո՛նց իսկապէս փրկաւ է սուրբ
Պատարագը, եւ որոնց համար ի գուր:
Այստեղ կը կրկնէ «Յառախապատու» էն
ի վեր մեզի յայտնի վարդապետութիւնը.
կը զանազանէ անգեղջ մեղաւորները զրդ-

1. *Յուզ. Արճիշեցի, Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ Պատարագին, տպ. Կալկաթա, 1830, էջ 8-9:*

2. *U. n.*, 49 9: